ՄՈՍԿՈՒԱՅԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃԷՆ

ՍՈՒՄԿԱՅԻԹԻ ՍՏՈՒԵՐԸ

Մոսկուայում՝ հին Աբսպաթում, պատառ բռնած մի մարդ կուչ էր անում՝ չդադարեցնել պայքարն ընդդէմ ալբոլոհիզմի եւ սոորպրոթիւններ էր հաւաքում այդ պայքարը ծայրայեղ միջոցներով չարունակելու համար: Ինչպէս միշտ լինում է նման դէպքերում, խմբուել էր մի ամբոխ, որը քննարկում էր օրախնդիր հարցը: Տարբեր էին կարծիքները: Մի մասը կողմ էր ծայրայեղ միջոցառումների, միւսները հանդէս էին գալիս այդ չարիքի դէմ չափաւոր պայքարի օգտին: Այդ ժամանակ լսուեց մի ակնարկութիւն, թէ մեր երկրում վերջին ժամանակներս արդէն չափազանց շատ են տարուել միթինկներով: Մարդկանց կապը, իբր, բաց են թողել այդ դեմոկրատիայով եւ ... տեսէք, թէ ինչ է կատարւում Հայաստանում...

– Իսկ ի՞նչ է կատարւում Հայաստանում,– անմիջապէս հետաքրքրուեցինք մենք:

Բացի նրանից, որ երեւանում տեղի էին ունեցել բազմամարդ միթինկներ եւ չէին աշխատել որոշ ձեռնարկութիւններ, ակնարկութեան հեղինակը, ասենք նաեւ մեր շուրջը կանգնածները, ոչինչ չդիտէին:

– Իսկ դուք տեղե՞կ էք, որ այս օրերին Մոսկուայում, ՍՍՀՄ գերագոյն դատարանի չէնքում լսում է մի գործ, որը կապուած է Սումկայիթում տեղի ունեցած զանգուածային յանցագործութիւնների հետ,– հարցրինք մենք:

Պարզուեց, որ մեզ չը ջղայնացած մարդկանց մէջ յստակ պատկերացում չկար, թէ անդրկովկասեան ո՞ր հանրապետութիւնում է դոնում Սումկայիթը, ինչպէս նաեւ ճակատագրական փետրուարեան օրերին ի՞նչ իրադարձութիւններ են տեղի ունեցել այնտեղ: Պարզապէս զոհեր են եղել: Եւ վերջ: Այս անտեղեակ մարդիկ, եթէ իմանային, թէ մեզ, որ հենց նոր էինք դուրս եկել դատարանի դահլիճից, ինձ էր այսօր վիճակուել լսել, երեւի, յանդիմանէին, թէ պատում ենք ֆաշիստական գրաման ժամանակների գազանութիւնների մասին:

... Գազանացած ամբոխը, ջարդելով դուռը, ներխուժել է Մելքումեանների բնակարանը, փողոց դուրս քաշել ընտանիքի ղեկավարին՝ Սողոմոն Մելքումեանին, նրա կնոջը՝ Ռախային, որդիներին՝ Էդուարդին ու Իկորին, դստերը՝ Իրային, եւ սկսել է նրանց ջարդը՝ ոմանք կացիններով, ոմանք մետաղաձողերով եւ դանակներով: Նրանց հարուածներից ընտանիքի հայրն ու մայրը, եղբայրներից մէկը գետին են տապալուել, միւսը փորձել է պաշտպանել քրոջը, որի վրայից տասնեակ ձեռքեր պատառուտելով հանում էին զգեստը:

Այստեղ ամէնից շատ ջանացել է Ճաֆարովը: Այդ նա է ճակատագրական հարուածը հասցրել Մելքումեանին, որից յետոյ աղջիկը զրկուել է թէ եղբօրից, թէ պաշտպանից: Իրան փորձել է փախչել, նրան գետին են տապալել, վրան պենդին լցրել ու այրել: Իրենց բակում: Բազմաթիւ հարեւանների աչքի առջեւ, որոնց հետ տարիներ շարունակ ամէն օր տեսնուել են, բարեւել...: Այսպէս՝ մէկ ժամում մոլեռանդների կացինների հարուածներից դադարել է գոյութիւն ունենալուց մի համեստաշէ աշխատաւոր ընտանիք: Եւ ահա այս ամէնը քնչական արձանագրութիւնների դատական եզրակացութեան լեզուով կոչւում է սպանութիւն «խուլիկանական մղումներով»:

Երեւի ժամանակ է պէտք լիովին գիտակցելու, պարզելու, թէ այդ ինչ դազանային չարութիւն է մոլեգնել Սումկայիթի Թաղամասերում, եթէ մարդիկ դիմել են այնպիսի ստորութեան, ինչպիսի է հաչուայարդարը ազգային պատանելիութեան համար՝ բռնաբարութիւն, կողոպուտ ու ջարդ: Ընդ որում մի մասն այդ ամէնը արել է, իսկ միւսները եղել են անտարբեր վկաներ: Զեն խնայել իրենց երեխաներին, որոնք նոյնպէս տեսել են սպանութիւնների վայրենի տեսարաններն ու զոհերի դիակների այրումը խարոյկներում: Ողբերգութիւնը Սումկայիթի փողոցներում, այսօր, ցանկանք մենք թէ ոչ, դարձել է ազգայնամոլական ամենամռայլ շմոլքի խորհրդանիշ:

Դատի ժամանակ, ասես կինոֆիլմում, մէկը միւսի յետեւից պատում է տեղի ունեցած ողբերգութեան նողկալի ժապաւէնը: Եթէ մարդասպանների մէջ յանկարծ ինչ-որ կասկածներ են առաջացել ազատայ զոհի ազգային պատկանելութեան առնչութեամբ, ապա նրանից պահանջել են, ինչպէս պատահել է Ա. Բաբայեանի հետ, արտասանել «ֆնտրխ» բառը, նրանք դիտէին, որ հայը այդ բառը մի քիչ այլ կերպ է արտասանում: Մի քանի անգամ Բաբայեանը ամբոխի պահանջով կրկնեց այդ անմեղ բառը, որի արտասանութիւնից կախուած էր նրա կեանքը: Բայց անգամ ճիշդ արտասանուած բառը չի ցրել ջարդարարների ամբոխի կասկածները, որը զբաղուում էր մեղադրեալ Ա. Ահմետովը: Նրանք ազգային պատանելութիւնը ստուգելու համար նրա վրայից պոկում էին տափատը, երբ անապատելիօրէն փողոցի ծայրին երեւացել է զրահամեքենան: Մարդասպանների ամբոխը մի ակնթարթում անհետացել է, սակայն այնուամենայնիւ հասցրել է կացնով մի քանի հարուած հասցնել Բաբայեանին:

Փորձելով արդարացնել Սումկայիթի իրադարձութիւնները, վկաներից մէկը ցուցմունք տուեց, թէ իբր Փետրուարի 29ին՝ երկուշաբթի օրը, երբ ձեռնարկութիւնները պէտք է աշխատէին, բանակը քաղաքում տարածել էր, թէ Բալաջարի երկաթուղային կայարան է բերուել հայերի կողմից սպանուած ադրբէյճանցիների դիակներով լի մի վագոն: Ասում էին նաեւ, որ Սումկայիթում հայերը հրկիզել են մի դպրոց ու մի մանկապարտէզ:

Հրապարակայնօրէն քննարկուող այդ «լուրը» ինչ որ մէկի կողմից հմտօրէն ինչպէս հարկն է բորբոքւում էր: Գրգռուած մարդկանց զանգուածի մէջ անմիջապէս յայտնուեցին լիտերներ՝ բարձրախօսներով, որոնք մարդկանց տարին բընակելի թաղամասերը՝ հայ որոնելու: Այդպիսի լիտերներից մէկը՝ Ա. Ահմատովը, դրեթէ հազար մարդուց բաղկացած ամբոխ է առաջնորդել դէպի 41 «Ա» թաղամաս:

Թէ ինչ է այնտեղ տեղի ունեցել, մեր ընթերցողներին արդէն յայտնի է:

Բայց ահա ինչն է առանձնապէս տարնապ պատճառում՝ դա միլիցիայի անգործութիւնն է, որի աչքի առջեւ անմարդկային յանցագործութիւններ են կատարուել: Եւ ոչ միայն միլիցիայի:

Փետրուարեան օրերին կենտրոնական թերթերից մէկում երեւաց Պաքուում ստացուած մի թղթակցութիւն, որի հեղինակը հիանում էր գիւղական հասարակ կնոջ սխրանքով, որը կանգնեցրել էր ամբոխը, նրա ոտքերի տակ նետելով իր գլխաշորը: Արեւելեան գեղեցիկ լեգենդը ոգեշնչել է յայտնի բանաստեղծին, որը ոչ այս, ոչ այն՝ բանաստեղծութիւն է գրել, գրականութեան մէջ յաւերժացնելով կնոջ ազնիւ պոռթկումը: Ցանկալի կը լինէր դրան հաւատալ: Բայց եթէ Ատրպէյճանում այդքան հեշտ էր կանգնեցնել մոլեռանդ մարդասպանների ամբոխը, ապա ինչու ամբողջ Սումկայիթում չգտնուեց մի մարդ, որն օգուտէր «ատրպէյճանական հին սովորութիւնից», որպէսզի կանխէր արիւնահեղութիւնը: Ոչ մի գլխաշորով կին, ոչ մի պատուով տղամարդ...

Եւ ինչպէս չվերյիշենք, որ լուրերը, սկզբում մէկը միւսից անհեթեթ, իսկ այնուհետեւ նաեւ Սումկայիթի դաժան ճշմարտութիւնը նոյնպէս հասան Երեւանի Թատրական հրապարակ: Եւ ոչ մի հակաօրինական գործողութիւն՝ ընդդէմ տեղի ատրպէյճանական բնակչութեան: Հանրայայտ է, որ Երեւանում միթինկների լարուածութիւնը թուլացաւ Ատրպէյճանի եւ Հայաստանի աշխատաւորներին Մ. Ս. Կորպաչովի դիմումի հանդիսատեսից անմիջապէս յետոյ, եւ մարդիկ ցրուեցին իրենց աշխատատեղիները, իսկ ահա հենց այդ ժամանակ Սումկայիթում ամբոխները ձեռքները կացին առան:

Թէ ինչպէս արձագանգեց Հայաստանը՝ յայտնի է, սրոյ հանդիսաւոր թափօր կազմած ամբողջ Երեւանը շարժուեց դէպի 1915 թուականի եղեռնի զոհերի յուշարձանը, որպէսզի ծաղիկներ դնի ի յիշատակ Սումկայիթի նահատակների: Եւ ոչ ոք այդ բազմահազարանոց սգոյ թափօրում մտքով իսկ չանցկացրեց վրէժ լուծել, ինքնադատաստան տեսնել: Ժողովուրդը արժանի մնաց իր պատմական անցեալին, ինքն իրեն:

Այս օրերին, երբ Մոսկուայում լսւում է սումկայիթեան գործը, մենք թերթում ենք «Պաֆիսմի Ռապդէյ» թերթի հաւաքածին: Կարեւոր եւ ոչ այնքան կարեւոր, երբեմն էլ երկրորդական հաղորդումների շարքում, որոնք տպագրուած են հանրապետական թերթի էջերում, ոչ մի խօսք չկայ այն մասին, թէ ինչ է տեղի ունենում ՍՍՀՄ Գերագոյն Դատարանի դատական նիստերի դահլիճում, ինչպէս եւ ոչ մի բառ չկայ Պաքուից ընդամէնը 30 քիլոմեթրի վրայ Փետրուարին տեղի ունեցած ողբերգութեան մասին:

Ցաւօք Հայաստանում էլ, իսկ այստեղ մենք էլ մեղանչումներ ունենք, փետրուարեան այն օրերին, երբ ժողովուրդը չանթահարուած էր Սումկայիթում տեղի ունեցածից, մեր մամուլն էլ բարեհոգաբար բերանը ջուր էր առել: Եւ եթէ հրապարակայնութիւն այսօր մեզ հնարաւորութիւն է տալիս բարձրաձայն արտայայտել մեր մտքերը այն ժամանակ, խոստովանենք ազնուօրէն, Հայաստանի զանգուածային տեղեկատւութեան ոչ բոլոր միջոցները արձագանգեցին ժողովրդի ցաւին եւ չարունակում էին աշխատել լճացման ժամանակների դեղատոմսերով:

Եւ ոչ միայն հանրապետութեան մամուլը: Կենտրոնական թերթերից ոչ մէկը հաչուետուութիւն չի տպագրում Մոսկուայում ընթացող դատավարութեան ընթացքի մասին, տեղի ունեցածին չի տալիս ո՛չ բարոյական, ո՛չ քաղաքական դնահատական:

Մոսկուայի հայ հասարակայնութիւնը, Հայաստանից այսօր եկած բազմաթիւ քաղաքացիներ հսկայական հետաքրքրութիւն են ցուցաբերում դատավարութեան նկատմամբ, եւ ցաւօք, ոչ բոլորին է յաջողւում դահլիճ մտնել, որտեղ լսւում է գործը:

Ամէն օր տուժածների չահերը պաշտպանող փաստաբանները՝ Պ. Շեպոշնիկովին եւ Ռ. Ռըզտունին հանդիպում են ունենում հայ հասարակայնութեան հետ ու պատում դատավարութեան ընթացքի մասին:

Այն ինչ մենք պատում ենք, վերցուած է ներկայ դատավարութիւնից, որտեղ դատաւորների առջեւ մէկը միւսի յետեւից բազմաթիւ վկաներ են անցնում: Չնայած նրանց «մոռացկոտութեանը», դատավարութեան մասնակիցների ջանքերով ջրի երես են դուրս գալիս սումկայիթեան ողբերգութեան մանրամասները, հաստատւում նրա գործող անձանց անունները: Մոսկուա Մոսկուովը հաւաստեց, որ բարձրախօսը ձեռքին մարդը մեղադրեալ Ա. Ահմետովն է, որը գոռալով ամբոխից պահանջում էր սպանել հայերին, բայց ջարդուփչուր չանել նրանց բնակարանները, որոնք դեռ «մեզ պէտք կը դան»:

Մէկ այլ վկայ՝ Ակար Սելիմխանովը, խճճուելով ստի մէջ, հարկադրուած էր խոստովանել, թէ իրեն վախեցրել են, որ եթէ ճիշդ ցուցմունքներ տայ, դատաստան կը տեսնեն: Այն հարցին, թէ ով է վախեցրել, վկան պատասխանեց. մեղադրեալ Իսմայիլովի հայրը:

Թոֆիկ Իթահմազովը, որն աշխատում է որպէս 41 «Ա» թաղամասն սպասարկող ԲԺԳ-ի տեղամասի վարպետ, ջարդի օրը եղել է հայերի մի քանի բնակարաններում եւ խորհուրդ տուել տնից դուրս չգալ: Նրանից յետոյ Ահմետովը այդ նոյն թաղամասն է բերել մարդասպաններին ու բռնաբարողներին:

«Իսկ ի՞նչ տեսք ունէր բակը ջարդի յաջորդ օրը»,– նրան հարց տուին երեւանցի փաստաբանները:

– Ատրպէյճանի Կոմկուսի Կենտկոմից եկած ընկեր Հանիֆաւի ցուցմամբ նախորդ օրը հայերի բնակարաններից դուրս նետուած ամբողջ կայքը եւ ջարդերի միւս հետքերը տեղափոխուեցին քաղաքային աղբանոց, այրուեցին ու թաղուեցին:

– Իսկ ինչո՞ւ թաղուեցին:

– Զգիտեմ: Այսպէս կարգադրեց Հանիֆաւը: Երեւի, որպէսզի չերեւայ:

Բարդ զգացումներ են առաջ բերում վկաներ՝ ամուսիններ Թէյլուրոմները: Նրանք իրենց մօտ թաքցրել եւ փրկել են տասը մարդ: Եւ քաղաքական մեծագոյն խիղճխոտութեան ու պարկեշտութեան այդ քայլը չի կարող չյուզել: Բայց ինչպէ՞ս հասկանանք մարդասպաններին պաշտպանելու նրանց ձգտումը: Մի քանի օր առաջ Թէյլուրոման, որը ռուսերէն չգիտի եւ ցուցմունքներ է տալիս թարգմանչի միջոցով, դատարանին համոզում էր, թէ բարձրախօսով մարդը ամբոխին էր դիմում անթերի ռուսերէն գրական լեզուով, իսկ ահա նրա ամուսինը՝ որը կնոջ հետ նոյն պատշգամբից տեսել է այն ամէնը, ինչ կատարւում էր բակում, համոզում է, որ կոչերը հնչում էին ատրպէյճաներէն:

Սայիտ Աղիզովին, որին Մոսկուա են բերել պահակախմբով, չէր հետաքրքրում, թէ ինչ էր տեղի ունենում շուրջբոլորը՝ նա զբաղուած էր թալանով: Երբ փորձում էին սպանել Ախա Սոռաքելեանին, նա թոցրել էր այդ կնոջ մատանին եւ ոսկէ շղթան: Բնակարաններից մէկում «Թիչատակ» էր վերցրել կանանց արտասահմանեան երկարաճիտ կօշիկներ, մէկ ուրիշում գտել էր մի չիչ հայկական թոնակ, որը տեղնուտեղը խմել էր: Մի այլ տեղ վրան էր քաշել ուրիշի ցինը: Մի խօսքով՝ թալանով էր զբաղուել:

Ինչ խօսք, Սումկայիթի իրադարձութիւնները լրջօրէն սասանեցին հարեւան ժողովուրդների բարեկամութիւնը: Բարեկամութիւնը առաջին հերթին ենթադրում է անկեղծութիւն ու կարեկցանք: Իսկ մենք արդէն յիշատակեցինք, որ դատարանի դահլիճում չկայ ատրպէյճանական մամուլի ոչ մի ներկայացուցիչ: Ի՞նչ է սա, ամաչկոտ լռակեցութիւ՞ն, թէ՞ իւրօրինակ դնահատական տեղի ունեցողին՝ որպէս սակաւանչական, պատկառելի մամուլի համար ոչ ուշադրաւ իրադարձութեան: Կարծում ենք, սրանք զուր հարցեր չեն:

***

Դատավարութիւնում Նոյեմբերի 4ից ընդմիջում էր յայտարարուած: Այն վերսկսուց Նոյեմբերի 10ի առաւօտեան:

Լ. ԱԶՐՈՅԵԱՆ

Զ. ԲԱԼԱԳԻՕԶԵԱՆ

(Արմենփրէսի յատուկ թղթակիցներ)